

## «ՄԱՅԿՐԵԴԻՏ» ՈւՎԿ ՍՊԸ

«ՄԱՅԿՐԵԴԻՏ» ՈւՎԿ ՍՊԸ Ընկերությունը, համաձայն իր կանոնադրության, հրապարակային օֆերտայի միջոցով փոխառություններ չի ներգրավում, և համաձայն Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի «Կանոնակարգ 14»-ի՝ Կազմակերպության վրա չեն տարածվում «Ընդհանուր կապիտալի համարժեքության», «Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի» նորմատիվները:

Կազմակերպության աշխատակիցների միջին եռամսյակային թվաքանակը կազմել է 17 մարդ:

**«ՄԱՅԿՐԵԴԻՏ» ՈւՎԿ ՍՊԸ Ընկերությունը** ֆիզիկական, իրավաբանական անձանց և անհատ ձեռներեցներին տրամադրում է վարկեր հետևյալ պայմաններով՝

### Վարկի տեսակ՝

1. Առևտրային վարկեր (առևտուր, արտադրություն, սպասարկում և այլն)
2. Հիփոթեքային վարկեր (անշարժ գույքի ձեռքբերում, վերանորոգում, կառուցապատում)
3. Գյուղատնտեսական վարկեր
4. Սպառողական վարկեր

### Վարկի պայմաններ՝

Առևտրային վարկեր՝

Ժամկետ — մինչև 5 տարի,

Տոկոսադրույք — տարեկան 10% - 24%,

Վարկային պարտավորության վճարման կարգ — ամսական անուիտետային և/կամ դիֆերենցված

Հիփոթեքային վարկեր՝

Ժամկետ — մինչև 20 տարի,

Տոկոսադրույք — տարեկան 5% - 22%,

Վարկային պարտավորության վճարման կարգ — ամսական անուիտետային

Գյուղատնտեսական վարկեր՝

Ժամկետ — մինչև 5 տարի,

Տոկոսադրույք — տարեկան 16% - 24%,

Վարկային պարտավորության վճարման կարգ — ամսական անուիտետային և/կամ դիֆերենցված

Սպառողական վարկեր՝

Ժամկետ — մինչև 5 տարի,

Տոկոսադրույք — տարեկան 16% - 24%,

Փաստացի տոկոսադրույքը - տարեկան 21.56%-69.94%,

Վարկային պարտավորության վճարման կարգ — ամսական անուիտետային

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{\left(1 + i\right)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR),

A - կրեդիտի գումարը (կրեդիտավորողի կողմից սպառողին տրամադրված կրեդիտի սկզբնական գումարը),

n — կրեդիտի մարմանն ուղղված վճարի թիվը,

N - կրեդիտի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը,

Kn - կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը,

Dn — կրեդիտի տրամադրման օրից մինչև կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած

Ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով,

i – տարեկան փաստացի տոկոսադրույքը, որը կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են կրեդիտավորման պայմանագրից կամ այլ կերպ:

**«ՄԱՅԿՐԵԴԻՏ» ՈւՎԿ ՍՊ** Ընկերությունը ներգրավում է փոխառություններ իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից հետևյալ պայմաններով՝

*Փոխառության պայմաններ՝*

ՀՀ դրամ - տարեկան 7-14%,

ԱՄՆ դոլար - տարեկան 6-11%:

«ՄԱՅԿՐԵԴԻՏ» ՈւՎԿ ՍՊԸ կողմից մատուցվող ծառայություններին, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների առավել մանրամասն ծանոթանալու համար կարող եք դիմել «ՄԱՅԿՐԵԴԻՏ» ՈւՎԿ ՍՊԸ՝ ՀՀ, Երևան 0010, Պապ թագավորի 4/6, տարածք 136 հասցեով, Հեռախոսահամար՝ (+374 60) 601010 կամ կազմակերպության տնային կայքէջ՝ [www.mycredit.am](http://www.mycredit.am):